

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

(Ստորագրողները գիտում են ուղղակի
Тифлисе, Редакция „Маскы“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւնը ընդունվում է ամեն լիցիտով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խմբագրատնի բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ձեռք հաշիւը—Ներքին տեսութիւն: Մի
առաջարկութիւն: Յովսէփ Խաչատրեանի մրցանակը:
Նամակ Մանկավարժ: Նամակ Խմբագրութիւն: Արտա-
քին տեսութիւն: Արտաքին գործիչները:
Անգղիա: Թիֆլիս: Նամակ Թիֆլիսից: «Մա-
սկ» հեռագրները: Յայտարարութիւններ:

ՃԻՐԴ ՀԱՅԻՆԸ

«Մշակի» ուրբաթվայ և շա-
բաթվայ համարներում տպված
առաջնորդող յօդուածներին մենք
կուզենայինք աւելացնել հետեւեալ
դատողութիւնները:

Որքան անձիւք է այն տեղե-
կութիւնը որ տուել է Բ. Գու-
ռը Եւրոպային Հայաստանի ազ-
գաքնակութեան թիւ վրա, պարզ
երևում է հետեւեալ հաշիւը:

Եթէ ճշմարիտ է որ հայերը
Հայաստանում կազմում են մահ-
մետական ազգաբնակչութեան 17⁰/₀
միայն և մի և նոյն ժամանակ
յայտնի է Բերլինի աւագածող-
վին տուած պաշտօնական տեղե-
կագրից որ հայերը Հայաստանի
չորս միլիոնէն բաժնուած 1,400,000
թւով են, ուրեմն թիւը քանի
հաշիւով կը յայտնուի որ մահմե-
տականների թիւը միմիայն խա-
բերդի Լչրդուսի, Վանի և Դիար-
բէքի միլիոնէն բաժնուած 9,000,000
է: Իսկ ամբողջ Փոքր-Ասիայում,
որտեղ ինչպէս յայտնի է երեք
միլիոն հայ կայ, եթէ նրանք 17
պրոցէնտ են կազմում մահմետա-
կան ազգաբնակչութիւնից, կը նը-
շանակի որ 27,000,000 մահմե-
տական կայ...

Պարզ է որքան հրէշաւոր է
այդ հաշիւը, երբ մեզ յայտնի է
որ ամբողջ Թիւրքիայում էլ այդ-
քան մահմետական չը կայ...

Բացի սորանից եթէ թիւը
ընդունում են որպէս մահմե-
տականներ անխափայտ պարզա-
նութեանը պատկանող այլ և այլ
ազգութիւնների ներկայացուցիչնե-
րին, նոյն իսկ մահմետական հայե-
րին, որոնք Հայաստանում անհա-
մեմատ աւելի բազմաթիւ են քան
թէ տաճիկները, ինչի ուրեմն,
խօսելով բրիտանացիների և նրանց
տրվելու վերանորոգութիւնների

մասին, թիւը յիշում են մի-
միայն հայերին, և այն էլ միայն
լուսաւորչական հայերին, առանց
յիշելու, օրինակ ասորիներին և
առհասարակ Հայաստանում բը-
նակվող բոլոր բրիտանացիներին:

Եւ հասարակ հաշիւը անխիղճ
մի հաշիւ է և բացի սորանից, ե-
թէ մի կողմից յիշում են Հայաս-
տանի մահմետականներին ամ-
բողջ թիւը, չը նայելով որ նրանց
մեծամասնութիւնն էլ հայ են,
ի՞նչի միւս կողմից չեն յիշում նոյն
երկրի բրիտանացիների ամբողջ
թիւն է:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

«Մշակի» խմբագրատան մէջ ստացվեցան Կ.
Պօլից և մեր զաւառական քաղաքներից բազ-
մաթիւ նամակներ, որոնց մէջ ցանկութիւն
են յայտնում, որ «Խնթի» առանձին գրքով
հրատարակվի: Որքան էլ թանկագին լինէր
կատարել մեր ընթերցող հասարակութեան
յարգելի բաղձանքը, այսուամենայնիւ, ցաւե-
լով սրտի ասեմ, ինձ անհնար է այդ պա-
հանջին լրում տալ, որովհետեւ պակասում են
թէ ժամանակ և թէ նիւթական միջոցներ
ուղղորդութեան համար:

Ըստ մեծի մասին վէպերը սկզբում մաս-
մաս տպվում են որ և իցէ ամառը կամ լը-
րագրի մէջ, յետոյ լոյս են ընծայվում առան-
ձին գրքերով: Բայց այս աշխատութիւնը
յանձն են առնում ոչ թէ հեղինակները, այլ
մասնաւոր անձներ, որպէս են հրատարակչե-
ներ, դրամաւորներ կամ տպագրական ընկե-
րութիւններ: Իսկ մեզանում, որպէս երևում
է, ամեն ինչ պէտք է հեղինակը անէ,—համ
զրէ, համ տպագրէ, համ աշխատէ վաճա-
ռել, որ իր ծախքը յետ ստանայ: Մեր ազ-
գաս հեղինակներին որքան հնարաւոր կը
լինի այդ,—ինքն ըստ ինքեան հասկանալի
է:

Մինչև այսօր միայն մէկ Միանաբանաց
յայտնվեցաւ, որ աշխատեց ամբողջով մեր
պարբերական հրատարակութիւններում ցըր-
ված բանաստեղծութիւնները մի գրքի մէջ:
Արդարեւ, գովելի աշխատութիւն: Բայց նրա-
նից յետոյ ոչ ոք չը յայտնվեցաւ, որ հաւա-
քէր և առանձին գրքերով տպագրել տար մեր
բնիկարիտակալին վերաբերեալ աշխատու-
թիւնները: Դեռ ևս զանազանում ենք, որ
ընթերցանութեան գրքեր չունենք:

Ինչ տարվայ ընթացքում «Մշակի» մէջ
տպվեցան զանազան մեծ և փոքր վէպեր,
պատմութիւններ, մշակութիւն, ճանապարհորդու-
թիւններ, և այլ և այլ բանասիրական աշ-
խատութիւններ,—եթէ այդ բոլորը դասու որ-
վէր և առանձին գրքերով հրատարակվէր, ան-

տարակոյս, բազմաթիւ հատորներ լոյս կը
տեսնէին: Բայց ի՞նչ եղան,—ստացան լրա-
դրական համարները, կարդային, առժամա-
նակ հետաքրքրվեցան, յետոյ մի կողմ ձգեցին,
—և բոլորը մոռացվեցաւ, բոլորը կորաւ...

Եւ թողնում եմ բարեկործական, կամ ժո-
ղովրդի մէջ ընթերցանութիւն, միտք և նոր
գաղափարներ տարածելու նպատակը,—բայց
նոյն իսկ վաճառականական կէտից նայելով
գործի վրա, դարձեալ շատ օգտաւէտ կը լինէր
մի այսպիսի ձեռնարկութիւն: Սխալ է այն
կարծիքը, թէ մեզ մօտ գրքեր չեն վաճառվում,
թէ տպագրութիւնը մեզ մօտ վատակ չու-
նի,—գրքեր վաճառվում են, մասնաւոր ընտիր
բանաստեղծական աշխատութիւնները:

Իսկ ինչ որ վերաբերում է «Խնթի»-ն, եթէ
գնահատում են նրա ժամանակակից նշանա-
կութիւնը, եթէ ցանկանում են, որ այդ աշ-
խատութիւնը առանձին գրքի մէջ ամբողջու-
թեամբ, աւելի տարածվէր և աւելի մատչելի լի-
նէր մեր ընթերցող հասարակութեանը,—ես
պատրաստ եմ տալ իմ համաձայնութիւնը և
ընդունել ամենանպատաստ որ պայմաններ առա-
ջին տպագրութեան իրաւունքի մասին, եթէ
որ և իցէ պարտն կը ցանկանար յանձն առնել
տպագրութիւնը:

Իսկ ես այս տարի պիտի դբաղվեմ «ԿԱՅ-
ՄԵՐԻ» հրատարակութիւնով, որի համար ար-
դէն ստորագրութիւն եմ բացել և սպասում եմ
բաժանորդների թիւի լրանալուն:

Իսաֆի

ՅՈՎԱԿԻ ԻԶՄԻՐԵԱՆՅԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՄՐՅԱՆԱԿ

Ինչպէս յայտնի է «Մշակի», «Մեղուի»,
«Բարոյի» և այլ ազգային թերթերի մէջ
իր ժամանակ հրատարակված տեղեկութիւն-
ներից, մեծ. Յովսէփ Խաչատրեանը Վլադիմիր
հաստատեց 1875 թուին Պետերբուրգում
գրաւար մրցանակ կամ պարգևատրութիւն
ազգային մատենադրութեան ծաղկման և
բարգաւաճման նպատակով փում և ազգասի-
րական նպատակով:

Թէ օրպիսի մեծ նշանակութիւն ունեն
մատենադրական մրցանակները և մեկնա-
սիրի բարոյական և նիւթական խրախու-
սանքները և պաշտպանութիւնը առհասարակ
ամեն մի մատենադրութեան և մանաւոր
մերի նման մանուկ մատենադրութեան հա-
մար, այդ յայտնի է ամենքին: Եւ եթէ
մենք այսօր ունենք մեր հին մատենադրու-
թեան մէջ մի քանի երեւելի գրուածքներ,
դրաց համար պարտաւոր ենք դարձեալ մեր
ազգային մեկնականներին—թագաւորներին,
իշխաններին, կաթողիկոսներին, և այլն: Մար
Աբաս Կատինան մեր ազգի առաջին տարե-
գրութիւնը հանեց Նինուէի մատենադրա-
նից Ա. Վաղարշակ թագաւորի յանձնարա-
րութեամբ. Ազաթանդուղտը գրեց իր պա-
մութիւնը Տրդատ թագաւորի հրամանով
Ջենուր Գլակը—Ս. Գրիգոր լուսաւորչի պատ-
ւէրով. հռչակաւոր Մովսէս Խորենացին
ստեղծեց իր երեւելի պատմութիւնը Սահակ
ասպետ Բագրատունի իշխանի խնդրանքով.
Նիլիէն—Մամիկոնեան Դաւիթ քահանայն
խնդրանքով. Վաղար Փարսկցին—մարդպան
Վահան Մամիկոնեան իշխանի խնդրանքով.

Տարածայի Ստեփանոս Ստոյրը—Ա. Սարգիս
կաթողիկոսի պատուէրով. Միխիթար Գօշը—
Աղուանից Ստեփանոս կաթողիկոսի յորդոր-
մամբ, և այլն և այլն:

Ահա սոցա օրինակին հետեւելով պ. Յով-
սէփ Խաչատրեանը հանդիսանում է իր մատենա-
դրական մրցանակով նոր մեկնաւոր մեր նոր
մանուկ մատենադրութեան համար:

Այդ մրցանակի կանոնադրութեան 5-րդ
յօդուածով նշանակած է 500 ռուբլի կամ
սրա մէկ մասը արժանաւոր շարագրութիւն-
ների համար, իսկ 7-րդ յօդուածով որոշած
է տալ այդ մրցանակը երկու տարին մի ան-
գամ, սկսելով 1877 թուից:

Շարագրութիւնները ընտրատելու համար
պ. Խաչատրեանը հրաւիրել էր և կազմել էր
մի յանձնաժողով Պետերբուրգի մի քանի հայ
գիտնականներից:

Աւարտած ունենալով Միխիթար Գօշի դա-
տաստանագրի ձեռագիրը իմ յառաջաբանու-
թեամբ *), 100-ից աւելի ծանօթութիւն-
ներով և այլ և այլ օրինակների բաղադրու-
թեան 8000 չափ տարբերութիւններով (վա-
րիանտներով), եւ ներկայացրի սոյն գրաւոր
աշխատարկութիւնս յիշեալ յանձնաժողո-
վին, որ և արժան գատեց պակիւ սրան ամ-
բողջ մրցանակով, ուստի և մեծ. Յովսէփ
Խաչատրեանը ուղարկեց ինձ 500 ռուբլի:

Ուրախ լինելով որ ինձ վիճակվեցաւ ստա-
նալ այդ մրցանակի առաջին պակիր (դեռ
ոչ չէր տրված), որով մարմնացաւ պ
Խաչատրեանի ազգասիրական մեծ հաստատու-
թիւնը, քաղցր պարտաւորութիւն եմ ճանա-
չում ինձ հրապարակաւ մատուցանել իմ
խորին շնորհակալքս որպէս մեծ. Խաչատրեան-
ցին, նոյնպէս և յանձնաժողովի գիտնական
անդամներին:

Խրախուսված լինելով յանձնաժողովի դո-
վատական կարծիքով և մրցանակի պակով,
եւ իսկոյն յանձնեցի յիշեալ աշխատարկու-
թիւնս հոգեւոր գրաքննութեան (ցենզուրային)
և երբ կը ստանամ տպելու, թղթաւորութիւնը
իսկոյն կը սկսեմ տպագրութիւն, հիմը գնելով
մրցանակի 500 ռուբլին, թէպէտ դրա հա-
մար կը հարկաւորի 1500 ռ. չափ:

Վահան Վ. Բաստամանյան

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Յունիսի 9-ին

Մօսկվայի քաղաքական կեանքի և ուսուցչ ընդ-
հանուր գրականութեան պատմութեան մէջ մի վը-
սեմ և հանդիսաւոր որ պիտի դառնայ տարեայ յու-
նիսի 6-ը. Վաղուց է արդէն, որ ինչ աւուրց Մօս-
կվան, այդ ազգային միութեան և զօրութեան օ-
րօրցը, տեսած չէր մի այդպիսի շքեղ և փառա-
ւոր երեւոյթ իր պատմական շրջանի մէջ, վաղուց
է, որ նա տուած չէր մի այդ տեսակ ընդհանուր
ազգային տօնախմբութիւն:

Ռուսաստանի ամենախոր և հեռաւոր անկիւն-
ներից գիտում են այստեղ գիտնականներ, հեղինակ-
ներ և զանազան հիմնարկութիւնների ներկայացու-
ցիչներ, որոնք, յայտնելով գերհաջաւկ պօքտի յիշա-
տակին իրանց անսահման յարգանքը ու երախտա-
գիտութիւնը, խոնարհաբար դնում են նրա արձա-
նի պատուանդանին ծաղկաթիթի պսակներ և սո-
րանով լցուցանում են, ասեմ, իրանց վերջին սըր-
բազան պարտը նրա բազմապարօնակ հանձնարին:

*) Սա տպվեցաւ անցեալ 1879 թուի «Փորձի»
մէջ, № VI, VII, VIII, IX.

Ջարկեց ան նշանաւոր ժամը, երբ բարձր 'ի գը-
լուսի պիտի հանդիսանար այդ ազգի հոգեկան և
մտաւորական ոյժերի միութիւնը: Նարկաւոր էր
միայն մի մտաւորական կենտրոն, մի ամբողջ
ցուկ, մի հեղինակ, ազգայնութեան արտայայտիչ,
որին ամենայն լուսաւորեալ մարդ կարող լինէր ա-
նուանել իր գաղափարակիրը, իր վարդապետը և
իր նախահայրը: Պաշտօնը միայն արժանի է այդ
փառաւոր կոչմանը:

Ահա հանդիսի նկարագիրը:

Լուսաւոր յունիսի 6-ը—պանծալի և խորհրդա-
ւոր օրը, որին ամենքը սպասում էին անհամբեր
սրտով: Մտաւոր եղանակը միայն համապատաս-
խան չէր ամենախմբական մեծութեանը և քաղա-
քացիների ընդհանուր ոգևորութեանը: Խաւարա-
մած ամպերը թանձր և անընդհատ քողով ծածկել
էին երկինքը, սաստիկաւորէն հողմը գուր աշխա-
տում էր ցան ու ցիր անել նրանց: Առատեան
ուրբ ժամին ժաղեց մի փոքրիկ անձրև և դա-
դարեցաւ: Արեգակն ևս մի քանի րոպէի համար
փառանգը դուրս եկաւ ամպերի միջից և տարա-
ժեց մի հրաշալի ներգաշխուրթին հանդիսի և
քողոր բնութեան մէջ: չիկեց նա մի քանի անգամ
իր ջերմ ճառագայթներով վարդապետով ծածկած
պօստի արձանի դուռը և ապա կրկին անհետա-
ցաւ ամպերի մէջ: Առատեան ուղիղ տան ժա-
մին թնշոյց արձանի առաջ դանձած վանքի դան-
դակը ձայնը և հրաւիրեց ժողովուրդը ջերմեանդ
մաղթանքներ մատուցանել պօստի անմոռանալի
յիշատակի համար:

Պատարագին էլ միտրոպոլիտ Մակարիոսը:
Վանքի մէջ ժողոված էին բարձր աստիճանաւոր-
ներ, գրեթէ բոլոր Առաքաւորների և մանաւորա-
պէս Եւրոպայի դանազան գիտութեանց ներկայա-
ցուցիչները: Միտրոպոլիտ Մակարիոսը, պատարա-
գին յետոյ, մի գեղեցիկ և սրտատու ճառ խօսեց,
որի մէջ նկարագրեց Պաշտօնի արգասաւոր գոր-
ծունէութիւնը առաջ գրականութեան մէջ: Այսպէս
ժողովուրդը խուռն լսողութեամբ դուրս եկաւ
վանքից և գլխաւոր պիւնջը դէպի հրապարակը
որ այն րոպէին ներկայացնում էր մի հրաշալի տե-
սարան: Արձանի առաջ շողողում էին դանազան
հաստատութեանց զոյգզոյն ոսկեգիր դրօշակներ:
Հրապարակը և նրա չորսը լցված էր բազմա-
թեամբ, մեղմ և ջնջող ազգային երգի նուագը
«Коль славеиъ Господь на Сионѣ» աւելի ևս կեն-
դանայնում էր պատկերը և առանձին փեմութիւն
էր տալիս ընդհանուր տեսարանին: Հասաւ այն րո-
պէն, երբ պիտի վայր ձգէին վարդապետը արձանի
վրայից: Բոլոր հրապարակի մէջ տրեց խորին լը-
ռութիւն, ամենքը գրեթէ չունէր ընդհատած ըստա-
տում էին և ահա կուսուր տատանեցաւ և ընկաւ
պատուանդանի վրա: Կարծես կենդանի հանդիսացաւ
ամենքի աչքին սիրելի պօստի պատկերը այդ
բարձրաւանդակ տեղում: Անցաւ րոպէական թրմ-
ութիւնը, ժողովուրդը ասես թէ դարձեցաւ քնից
և թնշոյց հրապարակը բարձրաձայն ձայնաւ աղա-
ղակից: Եւր իջնելով կարողաց այն ակաւ, որով
արձանը նուիրվում էր քաղաքին ի սեպհականութե-
թիւն, պատգամաւորները դիմեցին դէպի արձանը
և հիմալի ծաղկապսակներով դարձարեցին նրա
պատուանդանը: Նոյն իսկ օրը ամենախմբական
հանդէսը կատարվեցաւ համալսարանում: Ինկ-
տորը և երկու պրօֆեսորները երկայն ճառախո-
սութեամբ յոյց տուին Պաշտօնի գործունէութիւնը
և նրա նշանակութիւնը առաջ գրականութեան
մէջ:

Աւերորդ չէնք համարում և մենք մի քանի խօսք
խօսել Պաշտօնի գործունէութեան մասին: Գեռ
երիտասարդական հասակի մէջ, լիցեննի նստաբա-
նի վրա, Պաշտօնը սկսում է գրել ոտանաւորներ:
Կլասիկական ուղղութիւնը, որ այն ժամանակ թա-
գաւորում էր բոլոր հեղինակների գրականների
մէջ, չունէր մատուց պօստի վրա այնքան զգալի
ազդեցութիւն: Նրա լայնածաւալ հանձնարը կարող
չէր բաւականանալ նեղ ու անձուկ շրջանով կլաս-
սիցիզմի: Մոտան թելադրում էր նրան նոր մշո-
քեր, նոր գաղափարներ և մի այլ առողջ ու հիմ-
նաւոր հայացք իրական կենսի բոլոր երևոյթների
վրա: Այս պատճառով Պաշտօնի առաջին դեռ-
նաւորները մէջ մենք տեսնում ենք մի ա-
ռանձին հոտանք: Նոր ուղղութեամբ, որը, ասես թէ
բոլորովին պատուաւորում է նրա անձին և մանա-
ւանդ դարգանում է նրա վերջին գրութեանց
մէջ:

Բայրօնի ազդեցութիւնը կարելի է անուանել մի
անհիմի և արգասաւոր շրջան Պաշտօնի գործունէու-
թեան: Այս իսկ ազդեցութեան ներքոյ նա ստեղծ-
եց իր երեւելի Վեպէնի Օնէգինա աշխատութիւնը:
Մինչդեռ Բայրօնը հարկադրում էր Վեպէն Ժողովին
ճանապարհորդել դանազան երկրներ, Պաշտօնը
ընտրում է իր հերոսի արկածների համար բուն
իսկ ռուս հասարակութիւնը: Նա մոցնում է նրան

այս և այն ազգային կենսի շրջանի մէջ և այսպէս
դուրս է հանում լոկ միայն կենդանի ազգային
պատկերներ: Այսպէս նա դառնում է ազգային
պօստ, նա աշխատում է դաստիարակել ռուս հա-
սարակութիւնը նոր դադափարների հիման վրա:
Նա ցոյց է տալիս մի նոր ուղղութիւն, մի նոր
ճանապարհ իր հայրենի լեզուն դարձեցնելու
համար: Նորա ոտանաւորների ամենայն մի տողը
հնչում է մի դրաւիչ ներգաշխուրթին և ա-
հետականութեամբ, մարդս զգում է առանձին էս-
տետիկական գուարճութիւն, կարգաւոր այդ հրա-
շալի տողերը: Պաշտօնի ժամանակակիցների հա-
յեացքը շատ սահմանափակ և միակողմանի էր:
Նրանք նայում էին միայն արտաքինի վրա և այդ
տեսակէտից գնահատում էին Պաշտօնի հեղինակու-
թիւնները: Նրանք չէին կարող ըմբռնել այն ճիշդ
պատկերները, այն վսեմ ու ազնիւ մտքերը, որ ա-
մենայն մի քաղաքի իրում հնչում էին նրա քաղցրա-
նուագ քնարի լարերի վրա: Պաշտօնի ամենակա-
րեւոր և անմոռանալի փաստակը այն է, որ նա կա-
րողացաւ բարձրացնել գրականութեան նշանակու-
թիւնը և մի յարգելի տեղ տալ նրան: Նրա ժամա-
նակակից միայն ռուսաց գրականութիւնը սկսում է
ծանօթանալ և մոտենալ իրական կենսի խնդր-
ներին, հասարակութիւնը փոքր առ փոքր մտնում
է մի աւելի բնական մտաւորական աշխարհ և զգում
է գրականութեան անհրաժեշտ կարեւորութիւնը:
Պաշտօնի ազդեցութեան ներքոյ հասարակութիւնը
հանում է այն աստիճանի հասկացողութեան, որ
իր ներկայ վիճակի մէջ սկսում է ճանաչել իր մէջ
արմատացած լուսաւորութեան թշնամի էլեմէնտնե-
րը: Նա մաքառում է խաբէբայութեան, սղփոտ-
ութեան, խաւարի և չարութեան հետ և յաղթող հան-
դիսանալով, ստեղծում է իր համար մի նոր կենսի,
մի նոր ճանապարհ դէպի լուսաւորութիւնը:

Ահա թէ որպիսի բազմադրեւա արգասիք ունեցաւ
անմահ պօստի կարճամեայ գործունէութիւնը: Ան-
դաճալի կորուստ զգաց ռուսաց գրականութիւնը
նրա անընդհատ մահաւորը, մահանալը որ վեր-
ջին տարիներում նրա սրածուխ բանաստեղծական
ոգին ստացել էր արդէն իր արկանաւորութիւնը և
արժանանալով բացառ իր լայնատարած թեւերը պատ-
րաստ էր թանգազին գանձեր հաղորդել ռուսաց
գրականութեան:

Տէրենց

ՆԱԲԱԿԱ ԽԱՐԱԳՐԻՆ

Թիֆլիս, 25 յունիս

Արախութեամբ սրտի լուծ կնք, որ Տէր-Գրի-
գոր Մանդակունու յորդորմամբ և առաջարկու-
թեամբ կազմվել է մի վարչութիւն ազգասէր և
եռանդոտ անձերից, որոնց նպատակն է Հաւա-
քարի մէջ հաստատել մի կանոնաւոր դպրոց Ներ-
սիսեան դպրոցի պատրաստակաւանութիւնը և առաջին
դասնասան պրօֆեսորին համաձայն, որպէս զի այն-
տեղ ուսանող աշակերտները ուղղակի Ներսիսեան
դպրոցի երկրորդ դասնասան փոխադրվին: Գլու-
րի անունը ևս անուանել Վասն Ներսիսեան Ազ-
գային հոգեւոր դպրոցին Տիֆլիսայի: Մենք հաւա-
քարցիքս անհամբեր ուրախութեամբ սպասում ենք
այդ ազգագուս ձեռնարկութեան յաջող կատար-
մանը, և մեր խորին շնորհակալութիւնը երախտա-
գէտ սրտով յայտնում ենք արժանապատիւ տէր
Մանդակունուն և նրա աշակցող մեծ: պարօնե-
րին, և խնդրում ենք ժամ առաջ բանալ այդ ցան-
կալի դպրոցը և իրանց խորանձ լուսաւոր մեթո-
դով շարունակել հայ մանկւկների դաստիարակու-
թիւնը: Այս առթիւ գովութեան արժանի կը նը-
կատվի պ. Աղասի Մելիք-Ալազանցի աշակցու-
թիւնը, որ բարեկամ է Հաւաքարի հրապարա-
կում գտնված իր տունը կէս վարձով ապրողներին
և նրա տարեկան 600 ռուբլու վարձուց կէս վար-
ձը 300 ռուբլին միայն ընդունել և հարկ եղած
վերանորոգութիւնները իր ծախքով հոգալ, մանա-
ւանդ որ յիշեալ ազնիւ պարոնը խոստացել է ուրիշ
միջոցներով ևս նպաստել: Երանի կը լինէր, եթէ
ամեն օգնել կարողացող հայ պ. Աղասի օրինա-
կին հետեւէր: Նոյնպէս լուծ կնք որ այդ վարչու-
թիւնը նոր բացվելից դպրոցի հետ մի ընթերցա-
բան ևս պիտի բանայ ազգային և ամեն տեսակ
լրագրների համար: արդարեւ այդ ևս ցանկալի կը
լինի: Հաւաքարի ժողովրդականաց, տեսնել այն
օրը՝ ուր խմբված լինի հայ հասարակութիւնը նոր
արիւթագի մէջ լուսաւոր դարուս պահանջների հա-
մաձայն:

Տար երկինք, որ առանց կամայ չարակամների
և առանց ազգաբնաւ խոչնդոտների կատարվել այդ
ազգագուս ձեռնարկութիւնը: յուրախութիւն բո-
լոր հաւաքարցիներին, մանաւանդ նրանց, որոնց երե-
ւանները, անշնորհ և սղփոտ արեւոյնների տես-
նել

րումը կենսամաշ ապրում են իրեն աշակերտ, կա-
տարելով նրանց տան ամեն ծառայութիւնները,
տանտիկներին հրամաններին համաձայն, սամովարը
ձգել, աղտոտ ջրեր թափել, աւելի, փողոց գնալ
ու գալ, երկխաները զրօնցնել, գրկել, բաղնիք տա-
նել և այլն և այլն:

Հաւաքարցի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

„ГОЛОСЪ“ լրագրի մէջ տպված է հետե-
ւեալ թղթակցութիւնը Բագուայից:

Այրանիայի մէջ պատահած վերջին անց-
քերը այրանացի ազգանքներից առաջարկին
այրանական ապստամբութեան առաջնորդնե-
րից մէկին: Այդ համակրելի անձնաւորու-
թիւնը Իւսուֆ-բէյն է: Ի նկատի ունենալով
որ այդ մարդը որոշ հայեացքների և համոզ-
մունքների տէր է, որ նա իր ժողովրդի մէջ
մեծ հեղինակութիւն ունի և հետևապէս
այրանացիներն էլ բաժանում են նրա համոզ-
մունքները, աւելորդ չեմ համարում ծանո-
թացնել ձեզ նրա անձնաւորութեան և ճիշդ
տունքների հետ:

Այրանական ժողովուրդը զարթեց խոր քնից
և զինաւորելով իր երիտասարդ, կոյս ոյժերը,
պահանջում է յազնցնել իր ծարաւը
անկախութիւնով: Այրանացիների արթնա-
նալու պատճառը ոչ թէ թիւրքերն են,
ինչպէս շատերը կ'ըմբռնեն, այլ Սան-Սահ-
Ֆանօյի դաշնադիրը, որի բովանդակութիւնը
ներանց աւելի շատ հասկացան, բան թէ կա-
րելի էր ենթադրել: Այսպէս թէ այնպէս
Իւսուֆ-բէյ ժողովրդին արթնացնողներից
մէկն է և հէնց այդ պատճառով նա մի
հետաքրքիր անձնաւորութիւն է: Հազիւ թէ
գտնվի մէկ ուրիշը, որ աւելի լաւ ճանաչի
Բականեան թերակղզին, մանաւանդ նրա
արեւմտեան մասը, քան թէ Իւսուֆ-բէյ:
Մակեդոնիայի, Եպիրոսի, Ռէսպայի և Ալբա-
նիայի իւրաքանչիւր գիւղը նրան յայտնի է:
Նա կարող է մատենով հաշուել թէ ինչտեղ
ինչքան յոյն, բոլղարացի և այրանցի բնակիչ
կայ: Իր ճանապարհորդութիւնների, մարդ-
կերանց ճանաչելու և բնական ահագին ընդու-
նակութիւնների շնորհիւ Իւսուֆ-բէյ բաւա-
կան զարգացած մարդ է: Կրօնով մահմետա-
կան, նա մեծ յարգանքով վերաբերվում է
քրիստոնէութեանը: Իւսուֆ-բէյ իր գաղա-
փարները քարոզում էր Ֆանատիկոսի յամա-
ռութեամբ: Նա թիւրքաց անկարգ վարչու-
թեան անհաշտ թշնամի է և այդ պատճա-
ռով չափազանց շատ անգամ կալանաւորված
է եղել: Իւսուֆ-բէյ մի քանի բրօշուրներ է
հրատարակել, որոնցով նա չափազանց պա-
խարակում է թիւրքաց վարչութիւնը: Այդ
գրուածներից մէկի մէջ նա ասում է.

«Եթէ ինքը Յիսուս Քրիստոսը և 24000
մարդարէներ գային թիւրքիայի մէջ և բո-
ւային խոստացած վերանորոգութիւնները
մոցնելու համար, այդ նրանց էլ չէր աճող-
վի, որովհետեւ նրանք հին ժամանակնե-
րում ընդդիմանում էին մի սատանայի և խաչ-
վում էին, այրվում, տանջվում և այլն, իսկ
այժմ երբ բոլոր փաշաները, խօջաները, շէյխ-
ները, սօֆտաները և կայմակամները սատա-
նաներ են, դրանց ընդդիմանալը անհրաւ-
կայելի է»:

Բականեան թերակղզու ժողովուրդների
վիճակը նա ողբում է շարժող և գեղեցիկ
ոճով: Նկարագրելով այրանացիներին և նրանց
դրութիւնը, նա վշտանում է, որ բնութիւնից
հարուստ այդ ժողովուրդը ընկճված է
թիւրքաց վարչութիւնից: Ուժով մահմետա-
կանացի, նրանք գիտմամբ վայրենի և
սկզբնական դրութեան մէջ են թողված:
Այրանացիների իշխանները հալածվում և

կոտորվում էին, նրանց հողերը յափշտակ-
վում: Թիւրքաց վարչական ընդունակ մարդիկ,
որոնք տարաբաղդարար այրանցիներ էին լի-
նում, վաղ թէ ուշ կամ արքայութեան էին կամ
սպանվում: Ժողովուրդը կամ վարում էր
հողերը նահապետական ձեւով, կամ արածեց-
նում էր իր հօտերը և իր վերջին կօպէկ-
ներով վճարում էր թիւրքաց զանազան անկա-
ւ անարդար հարկերը, կամ աւաղակու-
թեամբ էր պարագում: Գեռ աւաղակու-
թիւնը իր լաւ կողմերը ունէր, որովհետեւ
այրանցի առեւծները չէին մոռանում գէնքի
զործածութիւնը: Այդ դրութիւնը չափա-
զանց ծանր էր և անտանելի դարձաւ, երբ
արտաքին յարաբերութիւնների շնորհիւ ալ-
բանացիները զգացին իրանց դրութիւնը:
1876 թուականի Արեւիայի պատերազմից յի-
տայ յոյսը և կենսական ցանկութիւնները ակ-
նեւ եղան և ամենքի հայեացքները ուղ-
ղվեցան Կ. Պոլսի կօնֆերենցիայի վրա: Իւ-
սուֆ-բէյի կարծիքով այդ կօնֆերենցիայի
նպատակը թիւրքիայի վերքերի դարմանելը
պէտք է լինէր, բայց եւրօպական պետութիւն-
ների ներկայացուցիչներին, մանաւոր Անգլիայի
ներկայացուցիչ խաղաղ ցանկութիւնն այն էր,
որ կրուպի թնդանութիւնի գոռոցը լավեցաւ և
աւիական և եւրօպական թիւրքիայի անմատ-
չելի ժայռերը և կանաչ դաշտերը արիւնով
ներկվեցան: Բերլինի կօնգրէսը Իւսուֆ-բէյ
անուանում է «հիւանդ մօր (Կ. Պոլսի կօն-
ֆերենցիա) հիւանդ որդի»: Նրա կարծիքով
Բերլինի կօնգրէսը պէտք է գտնէր այն թաշ-
կինակը, որով կարելի լինէր սրբել Բականեան
թերակղզու տարաբաղդ ժողովուրդների արիւ-
նոտ արտասուքները, իսկ դրա փոխարէն կօն-
գրէսը Կիպրոս կղզին դրեց Անգլիայի անյա-
տակ գրպանը, Բօսնիան և Հերցեգովինան Աւս-
տրիային տուեց: Խօսելով Բօսնիայի մասին
Իւսուֆ-բէյ ցաւում է, որ այդ երկիրը չորս
տարի շարունակ իր ամենալաւ որդիների ա-
րիւնը թափեց և նրա այդ վեհանք վար-
մունքը նրանով վարձատրվեցաւ, որ ինքը ու-
րիշի սեփականութիւն դարձաւ: Հեղինակը
մխիթարվում է տեսնելով, որ թիւրքաց վար-
չութիւնը չը կարողացաւ խել Այրանիայից
նրա պատմական բաժնութիւնը և վեհանքնու-
թիւնը:

«Այո, ասում է հեղինակը, այրանցիները
օգնութեան և համակրութեան արժանի են:
Բռնաւորները չը կարողացան ստիպել այդ
ժողովրդին փախչել իր հայրենիքից: Նա
չը մոռացաւ իր սուրբ բնասան (միմեանց
օգնելու երգում), չը տուեց իր զէնքը, չը
զաղթեց, թոյլ չը տուեց, որ իրան բռնա-
կիր անասուն դարձնեն և պահպանեց իր
ազգութիւնը, պահպանելով իր հայրենիքը
և մայրենի լեզուն: Չերնօգորցիները նման են
այրանցիներին, բայց նրանք պաշտպան էլ
ունեն, այրանցիները ոչ ոք չունեն: Այրան-
ցիները պէտք է անկախ լինեն, նրանց դաշ-
նակից է հարկաւոր և ահա այրանցի զին-
ւորը նայում է իր շուրջը: Սլաւեան հսկան
շրջապատել է նրան իր հզօր բազուկներով,
թիւրքիան մեռնում է, Յունաստանի հերոսա-
կան դարը անցել է և այժմ արժանի է
այրանցիների արհամարհական ժպիտին:
Իտալիան նրան ձեռք է մեկնում, բայց նրա
ոյժերը, համեմատելով սլաւեանների ոյժերի
հետ, ոչինչ նշանակութիւն չունեն: Ալբա-
նեան իր լողերից աւելի շատ եկամուտ ունի,
քան թէ Իտալիան իր մակարօններից: Աւս-
տրիան ոտից մինչև գլուխ զինաւորված
կանգնած է մեր սահմանների մօտ, բայց
նրա զէնքի վրա չէ ցամաքել Բօսնիայի բնա-
կիչների, նրանց կանանց և երկխանների
արիւնը, այն բաժ հերոսներն արիւնը, որոնց
Վիէնայի արքիստ կանայք չեն ծնել, այլ
բօսնիացի քաջ մայրերը, որոնք դեռ օրօրօք
մէջ սովորեցնում են իրանց երեխաներին սիրել
հայրենիքը, սրապապանել նրան և մեռնել
նրա համար: Միայն կոյրը կարող է չը նկա-

տել, որ Աւստրիայի գերեզմանը Թիւրքիայի գերեզմանից խոր է փորված. նրա երանները մէջ վազող արեւնը, նրա կեանքը և ոյժը պալմանուէթիւնն է: Ալբանիները պալմաններին շրջապատված են և եթէ Ալբանիան կամենում է ապրել, պէտք է եղբայրական յարաբերութիւններ կապէ պալման երիտասարդ հոկաների հետ:»

ԱՆԳԼԻԱ

Բրէզիլի գործը վճարվեցաւ անգլիական պարլամենտում: Մինիստրութիւնը այս օրերս խորհուրդ ունեցաւ և վերջապէս առաջարկեց համայնքների ժողովին հետեւեալ վերջինը:

«Ամեն մի անդամ համայնքների ժողովի իրաւունք ունի փոխարինել երդումը հաստատակաւ խոստումով:»

Այդ վճռին աւելացրած է, որ իւրաքանչիւր անգլիացի կարող է դատ սկսել պարլամենտական այն անդամի դէմ, որ առանց երդման ընդունվել է պարլամենտում:

Յայտնի է որ անգլիական ոչ մի դատարան երբեք դատ չի սկսի այդ տեսակ գործի մասին:

Այդպիսով մինիստրութիւնը առաջարկեց մի բեզօյսեցիա, առանց Բրէզիլի անուն անգամ յիշելու:

Մինիստրութեան այդ առաջարկութիւնը ընդունվեցաւ միաձայն: Ուրեմն այսօր կամ վաղը Բրէզիլ կրկին կը ներկայանայ պարլամենտին: Պահպանողական կուսակցութեան ընդդիմադրութիւնը այդ հարցի մէջ յաղթված է և մինիստրութիւնը յաղթող է դուրս եկել այդ խնդրի մէջ:

Փրանսիական լրագրիւնը, մանաւանդ «Désbat» լրագրիւր վերցված են անգլիական պարլամենտի դէմ: Ինչ իրաւունք ունի անգլիական պարլամենտը, ասում են Ֆրանսիական Թերթիւրը, քննութեան տակ գցել իր անդամները կրօնական համոզմունքները: Պարլամենտը ինկվիզիցիա չէ: Անգլիական պարլամենտը ցոյց տուեց իր կատարելա կեղծաւորութիւնը:

Բրէզիլից անգլիական պարլամենտը վախեւում է այն պատճառով զլխաւորապէս, որ նա հանրապետական է և աստիճան հակառակորդ է արդեան անգլիական պետական հիմնարկութիւններին: Նա, օրինակ, այն կարծիքի է, որ լորդերի պալատը պէտք է բոլորովին ոչնչանայ:

ԹԻՒՐԿԻԱ

«Polit. Corresp.» լրագրին գրում են Կ. Պոլսից հետեւեալը:

Որովհետեւ Արեգդին փաշայից մշակված ընթերցանութի ծրագրերը Հայաստանի համար պաշտօնապէս դեռ չէ հաղորդված պետութիւնների ղեկավարներին, բայց ներկայացրած է նրանց մասնաւոր կերպով, այդ պատճառով ղեկավարները դեռ չեն քննել կառարկութեան այդ ծրագրերը: Այնուամենայնիւ այդ պրոէկտը անբաւականացուցիչ և նպատակին անհամապատասխան է համարվում: Կասկած չը կայ, որ եթէ մի համայնքի մէջ, որտեղ քրիստոնեաները փոքրամասնութիւն են կազմում պաշտօնականները և ժողովուրդները կրօնաւոր մահմադարականներին, քրիստոնեաները դարձաւ անպաշտպան կը լինեն: Գնականները անհրաժեշտ են համարում կազմել Հայաստանի համար, կամ ինչպէս Թիւրքերը ասում են Քիւրդիստանի համար, մի առանձին օրգանական կանոնադրութիւն, որ ստեղծէր Հայաստանի մէջ Արեւելեան Բալկանիայի պէս մի դրութիւն:

Կերմանական լրագրի այդ տեղեկութեան վրա մենք մեր կողմից կաւելացնենք, որ Արեւելեան Բալկանիայի սահմանադրութիւնից աւելի լայն սահմանադրութիւն մենք չենք էլ ցանկացել և չենք էլ ցանկանայ աս այժմ:

Հայաստանի համար: Դա կը լինէր փրկութիւն ողորմելի թիւրքաց Հայաստանի համար:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 20 յունիս

Պատերազմի պատրաստութիւններն փութով առաջ կը տանի կառավարութիւնը. այլ ևս տարակույս չը կայ թէ Բերլինի ղեկավարած ռուսները ղեկը յունաց և թրքաց միջև պատերազմ է, եթէ Եւրոպայ իւր ներկայացուցիչներու որոշումն ուզէ որ Թիւրքերն ընդունին: Անգամ մը որ Բ. Գուռը Եւրոպայի չը հաղանդելու որոշումը տալ, Միտիքիսիսի համար ալ նոյն ընթացքին կը հետեւի: Բայց արեւոք վախճանը իրեն օգտակար կըլլայ, տարակուսական է. սակայն այս միջոցին Հայաստանի բարեկարգութեանց խնդիրն առաջաց համար ու է կարեւորութիւն չունենար, Եւրոպայի ընտան Եւրոպայի կը վերադարձնեն: Տէրութեանց ծանուցադրի երրորդ կէտին, որ է հայկական խնդիրը, կառավարութիւնը իւր պատասխանը հաղորդեց ղեկավարաց: Այդ պատասխանը տաճկական նախ քաղաքագլխութեան կատարելաբար պարն է, և ցոյց կուտայ թէ Բ. Գուռը տաճկական ղեկավար խաբուելու յոյսերով կապի:

Նախորդ նամակա հաղորդած էինք թէ Հայաստանի բարեկարգութեանց համար մի քանի միջոցներ կը խորհուրդ, յորոց մին պիտի ընդունի Բ. Գուռը: Այժմ Բ. Գուռը կը պատասխանէ ղեկավարաց թէ՛ Վիսնաուրապէս հայ զաւառներու համար ու է բարեկարգութիւն և բնական չը ինչ ունի իւր, այլ ամբողջ ասիական Թիւրքիան մէկ աչքով կը նկատէ և ամենուն հաւատարմապէս բարեկարգութիւն պիտի շնորհէ, և թէ այս բանին լաւագոյն միջոցն էր համարել Եւրոպայի Տաճկաստանի կազմակերպութեան համար պատրաստուած ծրագրիւնն ինչ ունենալով, նմանօրինակ կազմակերպութիւն մը ներմուծել անդա:

Եթէ տաճիկներն լաւ ճանչցած չըլլայինք անշուշտ այս յայտարարութիւնը զմեզ պիտի գոհացնէր, բայց այդ պատասխանին քիչ չափ ուշադրութիւն ընծայող տնիւրն պիտի տեսնէ թէ ուրիշ նպատակ չունի դա, բայց եթէ բարեկարգութեանց խօսքն երկար ժամանակի մը յետաձգել: Երկու տարի է որ Բերլինի վնասողութիւն որոնց Եւրոպայի Տաճկաստանի համար մասնաւոր կազմակերպութիւն ի գործ դնել, և այդ երկու տարիներու մէջ, Եւրոպայի աչքին առջև, ինչ ըրաւ Թուրքիա, Գուռը Գանձաւորութիւնը նիստեր կը դուրսարէ, պատրաստութիւններ կը տեսնէ և Աստուած միայն գիտէ թէ որ ժամանակ իւր աշխատութիւններն պիտի վերջացնէ. ամեն մէկ նստին Թուրքիոյ ներկայացուցիչներն ազատ են խնդրոց վրա երկարօրէն միմաբանելով, ուղածուն չափ երկարելու գործը, բայց օր մը անշուշտ կը վերջացնեն և կարգը կուգայ զայն ի գործ դնելու, որ ձգենք թէ ինչպէս կըլլայ: Այնուհետեւ նորէն կը սկսեն վիճաբանութիւնը տարական զաւառաց համար, զի ինչպէս յայտնի է, այդ ծրագրին իւր հիմ պիտի ծառայէ, զի եթէ ամբողջապէս զայն ի գործ դնել որոշուէր Ասիոյ մէջ, այն ատեն խնդիրն ուրիշ կերպարանք կաւնայ: Գանձաւորութիւն պիտի կարգուի լաւ տեղեկութիւններ ունենալ Հայաստանի, Արաբիոյ, Ասորիստանի, և այլն մասանց վրա: պիտի տեսնէ որ Միտիքիսիսի ծրագրի կարելի չէ ամենուն համար. առանձին առանձին ծրագրիւններ պատրաստելու է, մասնաւոր որ նոյն իսկ Եւրոպական զաւառաց համար ալ առանձին կազմակերպութեանց պէտք կը տեսնեն: Այլ կը սկսեն մտածել, փնտել, խորհել, ինչ և է բաւական ատեն կանգնել: Այս միջոցին Բ. Գուռը իւր ներկայացուցիչներէն դժգոհ կըլլայ, կը փութ զանաք կամ հարկը կը ստիպէ նոր պաշտօնի մը կոչել զանաք. յաջորդներն լաւ մը գործը չեն գիտեր, պէտք է աղէկ մը հասկնալ, ժամանակի կարտոն է: Ենթադրենք թէ լինցուցին, անշուշտ ամեն ջանք կընեն որ քրիստոնեայ տարերն տկար պահելու դրութիւն մը լինի, և այս արհեստին մէջ վարպետ են: Բ. Գուռը կը քննէ այս ծրագրի, կառավարկէ բարեփոխութիւններ. Գանձաւորութիւնը նորէն քննութեան կառնու, և մինչ այս մինչ այն, տաճիկները կը սանն, Բ. Գուռը Եւրոպայի հարցմանց կը պատասխանէ թէ ինչ ընէ, անպակաս իւր Գանձաւորութիւնը ձեռամբ կը գործէ, անպակաս ծրագրի մը ինչպէս ի գործ դնէ. այսպէսով բաւական տարիներ կը վատնի, ո զիտէ ինչ կըլլայ մը դիտէ Բ. Գուռը թէ երկու երեք տարուան օգնութեամբ և ամեն տեսակ նենգութիւններով ստակալի հարուածներ կրնայ տալ Հայաստանի:

Նոր հրկիզութիւններ, նոր սովեր, բռնի համաճարակ հիւսնադրութիւններ, կեղեցուկներ, դրամագլուխներն փաճանակներ, վերջապէս ժողովուրդ մը ոչնչացնելու այն ամեն ճարտար միջոցներն, որոյ համար տաճիկներն քանակի յատկութիւններ ունին: Ինչ պիտի ընէ Եւրոպայ: Եթէ Եւրոպական մասնոյ հաւատարմը, հայկական խնդիրն կարգադրեն Եւրոպայի շահն է և թէ պիտի փութի ազգային պաշտօնական շրջանակներն պ. Գուռին իրա աւելի մեծ յոյսեր կը տաճէին և զինքն արքան չափաւորեալ չէին կարծել. երկուքը սերսած է տարածուել, թէ արդեօք Հայաստանի խնդրոյ համար պ. Գուռն ալ չէլով, 1 է յարդի գաղափարներով պիտի սնանի. Պատրիարքը և Գուռն երբ անցեալ օր Հայաստանի բարեկարգութեանց վրա կը խօսեն, պ. Գուռն զարմացմամբ կը հարցնէ Սրբազանի—որեքն դուք կուգէք Հայաստան մը կազմել—Գուռնն այս զարմացական հարցումը, եթէ ներքին լինէր ռաւիական բացատրութիւն մը գործածել. պիտի ըսէինք թէ, տաք ապուրին մէջ պաղ ջուր լեցնելու կը նմանի:

Ինչ ընենք որ մեք խելքի պակասութիւն ունինք, երբ դեսպան մը, երբ մեծ այցելուներ, Կ. Պոլսի եկած ժամանակին միայն Պատրիարք մը տեսնելու առիթ կուենան և ոչ այլ ոք հայերէն, բնական է որ իրենց դադափարներն մեծապէս ազդեցութիւն ստանան մեր հակառակորդներէ, որք չարունակ կը ջանան զիրենք շրջապատել: Մեծ փափագ և քիչ խելք—անա այս է մեր արդի վիճակը:

Թիւրքերն մեր ամեն գործոց լաւ ուշադիր ըլլալով, ըստ այնմ ական կը փորեն: Ուրիշ առիթ գրեցինք թէ կառավարութիւնը հայկական պահանջմանց դէմ քիւրդներն կը պատրաստէ. եթէ մէկ կողմէ պիտի զինէ զանաք, միւս կողմէ դիւանագլխութիւն պիտի ուսուցանէ նոյա: Երէկ Թիւրք Թիւրքերն կը հաղորդեն թէ Շէյխ Սպառուլան հանդերձ մի քանի քիւրդներով պատգամաւոր կուգայ Կ. Պոլսի ի ղեկման քիւրդ ժողովրդին:

Ինչ ըսնի համար քաղերին, տարակույս չը վերցնէր, հայ պահանջմանց դէմ քիւրդ պահանջումներ ընել, և ցոյց տալ Եւրոպական ղեկավարաց թէ հայկական ինքնավարութեան բաւը երբ արտասանուի, ամեն քիւրդներն ի ղէն պիտի դիմեն: Գրեթէ քաղաքաւոր շատ զգուշութիւն պիտի չունենան զարիւններն համոզելու. թէ ինչ իսկ մենք չենք որ ամեն տեղ պոռաքանք թէ քիւրդներն կենդ ունին, մենք զենք չունինք: Այսօր ամեն կողմ գաղափար տարածուած է թէ քիւրդներն թէպէտ և վայազ, բայց կործան են,—սխալ գաղափար, բայց ինչ օգուտ այնքան ձգած է, երբ զինեալ ժողովուրդ մը պահանջներ կուենայ և անգին ժողովուրդ մը պահանջներ կուենայ, հաւանական է որ յաղթանակը զինեալ տանի:—Բայց ո՞վ կը խրէ այս պատգամաւորներն, դա յայտնի է որ ինքնակոչ են:—Կայ քիւրդ ժողովուրդ մը որ պահանջումներ ընէ.—ոչ.—Բայց քանի որ իշխանութիւնը թրքաց ձեռքն է, ուղածին պէս կը գործածեն. վաղը կը տեսնու թէ տեղական իշխանութեան ազդեցութեամբ կը յարձկն հայոց վրա քիւրդներ, և հոս կառավարութիւնը կը յայտարարէ թէ հայոց ինքնավարութեան խնդիր կայ և դորա համար է, մինչդեռ ինքզինքնու մոգէն չանցնել: Դիւանագլխական հարցերու մէջ թրքաց հետ մըցելու համար շատ խալ կը:—Սովա համար անչափ խաղեր խաղացին մեզ և յաղթեցան, ինչ կըցանք ընել.—դեռ երէկ տեղւոյ Եւրոպական թերթերն զարմացմամբ կը հրատարակեն թէ հեռագրաւորապէս նորընտիր պաշտօնեայն սովելոց յանձնաժողովը եկած հեռագրիւններ չը յանձնել կեղծական ժողովը և թէ ժողովը մեծ անտուգութեան մէջ է. Թերթերն այս լոյսն չեն ուղեր հաւատալ, բայց այսօր կեղծական մասնաժողովին ստուգեցինք թէ կատարելապէս ճիշտ է:—Զարմանալու բան չը կայ:

Պ. Արգար երէկ մեկնեցաւ աստի. Ամեն անոնք որ Եւրոպի ընկնցան իրեն հետ տեսնելու մեծապէս զոհ եղան և կը փափագէին որ երկար տան դեռ Կ. Պոլսի մնար. կը լսեմք թէ հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան մասին մի քանի բարեկամաց հետ կարգադրութիւններ ըրած է, միայն փափագելի է որ այդ պարտնները չը մոռնան իրենց խոստումներն պ. Արգարի բացակայութեան միջոցին: Կ. Պոլսոյ մէջ դաս մը անձինք կան որ բարձր ընկերութեան կը վերաբերին, օտարական մը մեծամեծ յոյսեր կրնայ դրնել նոյա վրայ, բայց պէտք է գիտնալ որ նոյա ակել լաւ խորհրդատուներ են, քան թէ գործ տեսնողներ: Պ. Արգար վերջի երկու Գարդասէր—Հայաստան Օրթոդոքս աղքատիկ վարժարանը այցելեց. անցեալներն առիթ ունեցաւ ծանօթացնել Վլադիմ ընկերացոյց այս անձնուէր ու խելացի

աղջկանց ընկերութիւնը, որ լուի մեծիկ Հայաստանի համար նախալրթի վարժուհիներ կը պատրաստէ, դատարարներով Կ. Պոլսի գտնվող հայաստանցի աղքատիկ աղջկաներն: Շատ զարմացաւ պ. Արգարը, երբ լսեց թէ վերջերս Տիֆլիսէն չորս հարկւր այսքան բուրլի նուէր մը զոր խրկած են հոս Գարդասէր Հայուհեաց Ընկերութեան, իրենց չէ յանձնուէր, այլ Արգանուէր Հայուհեաց Ընկերութեան: Իրենք չէին գիտեր թէ այս գումարը իրենց եկած լինի, բայց պ. Արգար ապահովեց թէ այս անուամբ ժողոված են, և թէ տիկնայց յանձնաժողովը մէջ է նաև Թիֆլիսի Զովհաննիսեանց, հետաքրքար ու է տարակույս չունէր. ուստի Պատրիարքարանի պիտի դիմեն և խնդրեն որ այս գործին վրայ տեղեկութիւն տան: Մէք ևս կը խնդրեմք Տիֆլիսի ազնուէի տիկնաներէ, որ հաճեն այս մասին տեղեկութիւն մը հաղորդել Վլադիմ միջոցաւ: Զի լաւ է որ ամեն ընկերութեանց համար ժողովածներն իրենց յանձնուին, եթէ սխալում լինի մտահոգութիւնը կրնայ պակասել: Արգանուէր Հայուհեաց ընկերութիւնն ալ շատ յարգելի է, և փափագելի է որ անոր համար ևս հանգանակութիւն լինի:

Այս երեկոյ հրատարակուած Թերթերն կը հաղորդեն թէ՛ ղեկավար գոհ չեն եղած կառավարութեան պատասխանէն հայկական խնդրոյ մասին և թէ Եւրոպական տէրութեանց ներկայացուցիչներն միաձայն հաւանութեամբ պիտի հաղորդեն Բ. Գուռն թէ իրենք իրենց ծանուցադրին մէջ ամբողջ ասիական Թիւրքիոյ համար բարեկարգութիւն չեն պահանջած, այլ յատկապէս Հայաստանի համար յիշելով Պէրլինի դաշնագրի վրայ. Թիւրք մասուր ցաւ կը յայտնէ որ յատուկ Հայաստան գաւառ մը ճանաչելով, Եւրոպա նորա համար առանձնահայրենաւ բարեկարգութիւններ կը պահանջէ:—Կը խօսուի նաև Անգլիայէն առ Կոչեն եկած մասնաւոր հրահանգներու վրայ, այս հրահանգներն մեզ նպատաւոր կը կարծուի: Տեսնեմք:

Հայկակ

«ՄԵՍԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

10ՆՎՈՆ, 27 յունիսի: Չունիսու ներկած է: Զինաստանը չէ կամենում վերադառնալ Ռուսաստանի արժանաւորութիւնը, նա կամենում է շարունակել բարեկամական յարաբերութիւնները Ռուսաստանի հետ:

Կ. ՊՈԼԻՍ, 28 յունիսի: Հուսէյն փաշա նշանակված է պատերազմական մինիստր:

ՓԱՐԻՋ, 28 յունիսի: Չախակողմեան կուսակցութեան բոլոր լրագրիւնները ասում են որ սենատը քուէարկեց երէկ կատարեալ ներողութիւն: Նրանք հրաւիրում են պատգամաւորներին ժողովը ընդունել օրէնքի ծրագրի այն նոր ձեւակերպութիւնը, որ նրան տուել է սենատը:

ՎԱՐՇԱՎԱ, 27 յունիսի: Դատարանը ծծկեր երեխաներին ջնջելու գործի պատճառով պատժի դատապարտեց, Տիֆլիսի գրեկ բոլոր իրաւունքներից և առաւելութիւններից և ուղարկել գործաւորների տունը ամենաժանր աշխատանքների համար երեք տարով պոլիցիայի հսկողութեան տակ: Տիֆլիսի չորս տարով բանտի դատապարտել և 4 ամս սով երկրիցական ապաշխարութեան, Ստեփանիկին երեք ամսով:

Կ. ՊՈԼԻՍ, 29 յունիսի: Գաղի Օսման փաշա հրաժարական է տուել պատերազմական մինիստրի պաշտօնից և մնում է պալատի մարշալ:

10ՆՎՈՆ, 30 յունիսի: Բրիտանական ամրացած զէրքեր Կարուլի մօտ հրամայված է ոչնչացնել: «Times» լրագրիւր համարում է Օսման փաշայի հրաժարականը մի ապացոյց, որ Սուլթանը բնագիւղէ մը այժմ Եւրոպայի կամքին ընդդիմադրութիւն անելու: Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունիսի: Պետական բանկի 50% տոմսեր առաջին շրջանի արժէ 94 ռ. 25 կ., երկրորդ 91 ռ. 78 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ., առաջին ներքին 50% փողատուութեան տոմսեր արժէ 228 ռ. 25 կ., երկրորդ 223 ռ. 50 կ., արեւելեան առաջին 91 ռ. 78 կ., երկրորդ 91 ռ. 50, երրորդ 91 ռ. 25 կ., ոսկի 7 ռ. 76 կ.: Ռուսաց 1 ռուբլ 1 օնցոնի վրա արժէ 25 1/32 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա 218 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 268 Ֆր. 75 սանտիմ Բորսայի արամագրութիւնը հանդարտ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

